առնելիքն իւր համեմատ վճռոյն իւրոյ կարող է խնդրել դատաստանէն ըմբռնել անձն, կամ ստացուածքն պարտականին։

ԳԼՈՒԽ ՄԺ.

Ամենայն գանգատող որ ըմբռնելով անձն պարտականին և մուծանելով 'ի բանտ ստացուածքն պարտականին ազատ լինի և բանտ արկեալն կացցէ և մնասցէ 'ի բանտի մինչև հատուցանէ յետին լոմանն պարտուց իւրոց։

ԳԼՈՒԽ ՄԺԱ.

Ամենայն գանգատող եթէ ըմբռնեսցի ստացուածքն պարտականին իւրոյ անձն պարտականին ազատ մնասցէ, մինչև հաւաքելով ամենայն ստացուածքն պարտականին, եթէ ոչ բաւեսցի պարտուց նորա, յայնժամ կարող է ըմբռնել անձն պարտականին և մուծանել 'ի բանտ և դարմանել նմայ ըստ Օրինօք մինչև մին տարի, յետ մին տարուց եթէ պարտականն ընդունեսցի տալ նմայ նոր թուղթ պարտուց երիս ամաց ժամանակաւ տացէ և ելցէ 'ի բանտէն եթէ ոչ կացցէ 'ի բանտի մինչև երիս ամս, յետ երից ամաց ազատ լիցի ելցէ եթէ պարտն լիցի մինչև հարիւր դահեկան, եթէ յաւելի մնասցէ 'ի բանտի մինչև հատուցանիցէ։